Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-06-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Թամանյան փող. 6շ. 14
1.3 Պետական գրանցման համարը		222.160.760605
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-03-25
1.5 ՀՎՀՀ-ն		02616924
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94530442
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.hdif.org
1.8 Էլեկտրոնային փոստը		info@hdif.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Թիմոթի Սթրայթ Դեյվիդ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Լուսինե Քասարջյան		
Նազարեթ Սեֆերյան		
Արեգ Մաղաքյան		
Քրրք Դավիդ Վոլաս		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Տաք հագուստ տեղահանված Արցախցիների համար	13,167,522

Digitally signed by
HAYARPI PETROSYAN 5107810187
Date: 2024.06.28 17:11:25

	Այգեպարի համայնքային կենտրոն - տեղի կանանց համար աշխատավայր+կարի մեքենաների ապահովում	1,535,267
	Բերդ քաղաքի կանանց Ռեսուրս կենտրոնին ապահովել աշխատավայրով և զուգահեռ դրան կառուցել Հյուրատուն	2,999,153
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	փոխառություն	16,515,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Տաք հագուստ տեղահանված Արցախցիների համար	13,105,522	
Այգեպարի համայնքային կենտրոն - տեղի կանանց համար աշխատավայր+կարի մեքենաների ապահովում	1,535,267	
Բերդ քաղաքի կանանց Ռեսուրս կենտրոնին ապահովել աշխատավայրով և զուգահեռ դրան կառուցել Հյուրատուն	2,999,153	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	34,441,440	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	17,639,942	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

AVC
Consulting&Audit

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Homeland

ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆԻՍ-2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վնասախարության հայտարարություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եվ հաստատման պատասխանատվության վերաբերյալ 2

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 5

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 7

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 8

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

ԳԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամի և նրա դուստր կազմակերպության (այսուհետ՝ Խումբ) 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Խմբի ֆինանսական վիճակի մասին,
- Խմբի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Խմբում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Խմբի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Խմբի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Խմբի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2024թ. հունիսի 26-ին:

Տնօրեն՝
Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝

Թիմոթի Դեյվիդ Սթրայթ

Աննա Գրիգորյան

2024թ. հունիսի 26
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈԴՄԻՑ -02.08.2006թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամի և նրա դուստր կազմակերպության (այսուհետ՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավատահաստատում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց

խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

26 հունիսի 2024թ.

Գլխավոր տնօրեն՝ *Մ. Պետրոսյան*

Աուդիտոր *Ա. Արարյան*

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

«Հայրենիքի զարգացման հախաձեռնություն» հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	10 981	9 497
Հետաձգված հարկային ակտիվներ		560	57
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**11 541**	**9 554**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	21 660	22 016
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	7 244	3 913
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	6 313	3 351
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**35 217**	**29 280**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**46 758**	**38 834**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կուտակված շահույթ		(114 089)	(89 213)
Ընդամենը սեփական կապիտալ		**(114 089)**	**(89 213)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	9	113 970	94 428
Ակտիվներին բերաբերող շեորիներ	8	8 940	7 088
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**122 910**	**101 516**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	3 804	9 543
Եկամուտներին վերաբերող շեորիներ	8	27 147	14 374
Ստացված փոխառություններ	9	3 873	-
Ընթացիկ պահուստներ	11	3 113	2 614
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**37 937**	**26 531**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**46 758**	**38 834**

Տնօրեն՝ Թիմոթի Դեյվիդ Սթրայթ

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝ Աննա Գրիգորյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 9-24):

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

«Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	31.12.2023թ. ավարտված տարի	31.12.2022թ. ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	12	47 489	33 767
Վաճառքի ինքնարժեք	12	(33 899)	(23 412)
Համախառն շահույթ (վնաս)		**13 590**	**10 355**
Ցնորիներից եկամուտ	15	8 559	16 385
Վարչական ծախսեր	13	(38 159)	(36 387)
Իրացման ծախսեր	14	(1 601)	(4 101)
Գործառնական այլ եկամուտներ	15	1 142	19 706
Գործառնական այլ ծախսեր	15	(3 269)	(1 878)
Այլ օգուտներ և կորուստներ	16	(5 641)	9 301
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		**(25 379)**	**13 381**
Շահութահարկի գծով ծախս	17	503	(25)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		**(24 876)**	**13 356**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**(24 876)**	**13 356**

Տնօրեն՝ Թիմոթի Դեյվիդ Սթրայթ

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝ Աննա Գրիգորյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին (էջ 9-24):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

«Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հազար դրամ		
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**(102 569)**	**(102 569)**
Տարվա արդյունք	13 356	13 356
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(89 213)**	**(89 213)**
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**(89 213)**	**(89 213)**
Տարվա արդյունք	(24 876)	(24 876)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(114 089)**	**(114 089)**

Տնօրեն՝ Թիմոթի Դեյվիդ Սթրայթ

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ Անետ Գրիգորյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 9-24):

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

«Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից,ապրանքների իրացումից մուտքեր	39 078	37 402
Ստացված դրամաշնորհներ և նվիրատվություններ	23 184	22 842
Այլ գործառնական մուտքեր	18	20
Աշխատակիցներին և նրանց անունից վճարված դրամական միջոցներ	(15 085)	(13 753)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(51 056)	(40 766)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(6 776)	(5 986)
Այլ գործառնական ելքեր	(2 564)	(4 797)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(13 201)**	**(5 038)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերումից ելքեր	(4 279)	(3 256)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(4 279)**	**(3 256)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների ստացումից մուտքեր	20 388	4 697
Փոխառության մարումից ելքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**20 388**	**4697**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**2 908**	**(3 597)**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**3 351**	**7 451**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	54	(503)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**6 313**	**3 351**

Տնօրեն՝ Թիմոթի Դեյվիդ Սթրայթ

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ Աննա Գրիգորյան

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին (էջ 9-24):

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպության մասին

«Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2013թ. մարտի 25-ին:

Հիմնադրամի գործող կանոնադրությունը գրանցվել է 2013թ. մարտի 25-ին Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից (գրանցման համար՝ 222.160.760605, վկայական՝ 03Ա910605):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Թամանյան 6, բն.14:

1.2 Հիմնական գործունեությունը

«Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամի առաքելությունն է Հայաստանի համայնքներում հիմնել, զարգացնել և շարունակաբար աջակցել կենսունակ զարգացման նախաձեռնություններին:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- նպաստել աշխատատեղերի ստեղծմանը Հայաստանի համայնքներում բնակվող գործազուրկ կամ ոչ լիարժեք զբաղվածությամբ կանանց և տղամարդկանց համար,
- խթանել հիմնական շահառուների մասնակցությունը իրենց համայնքների զարգացման գործին՝ կրթության և ակտիվ ներգրավվածության միջոցով
- հնարավոր դարձնել Հայաստանում արտադրված արտադրանքի վաճառքը տեղական և արտասահմանյան շուկաներում
- աջակցել Հայաստանի համայնքներում կոլեկտիվ զարգացման նախաձեռնությունների կազմակերպմանը՝ համախոհ այլ հաստատությունների և անձանց հետ կապերի ակտիվ ստեղծման միջոցով

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի աշխատակիցների թվաքանակը կազմել է 4 մարդ, իսկ 2022թ.՝ 3 մարդ:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Չափման հիմունքները

Համախմված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Խմբի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Խմբի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը, քանի որ լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Անընդհատության սկզբունքը

Համախմված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության սկզբունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5 Դատողությունների գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պատրաստելու համար Խմբի ղեկավարությունից պահանջվում է կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են

գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է հետևյալ դուստր ընկերությունը.

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	*Մասնաբաժին %*	*Գրանցման երկիր*	*Գրանցման ամսաթիվ*	*Գործունեության որոտ*	*Ձևավորման տարեթիվ*
«Էյչ Դի Այ Էֆ Թրեյդինգ» ՍՊԸ	100	<<	03 մարտ, 2018	Հուշանվերների վաճառք	2018

31 դեկտեմբերի 2022թ. Դուստր ընկերություն	*Մասնաբաժին %*	*Գրանցման երկիր*	*Գրանցման ամսաթիվ*	*Գործունեության որոտ*	*Ձևավորման տարեթիվ*
«Էյչ Դի Այ Էֆ Թրեյդինգ» ՍՊԸ	100	<<	03 մարտ, 2018	Հուշանվերների վաճառք	2018

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններ

Դուստր են համարվում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են «Էյչ Դի Այ Էֆ Թրեյդինգ» ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունները: Հիմնադրամը հանդիսանում է «Էյչ Դի Այ Էֆ Թրեյդինգ» ՍՊԸ-ի 100% սեփականատերը:

Համախմբման արդյունքում չներառված գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

3.2 Պետական շնորհներ

Խումբը որպես շնորհ հաշվառում է ստացված միջոցները որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Պետական շնորհների կազմում կազմակերպությունը հաշվառում է անհատույց ստացվող միջոցները նվիրատվությունները անդամավճարները:

Խումբը որպես պետական շնորհ միջազգային և տեղական շնորհատու կազմակերպություններից ստանում է դրամական միջոցներ հիշյալ ծրագրերի իրականացման համար:

Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսերը, որոնց համար ստացվել են այդ շնորհները: Օրինակ՝ ամորտիզացվող (մաշվող) ակտիվներին վերաբերվող շնորհները ճանաչվում են որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, ըստ որոնց հաշվարկվում է այդ ակտիվների մաշվածությունը:

Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու՝ ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա գումար (դեբիտորական պարտք):

Երբեմն որոշակի պայմանների չկատարման դեպքում շնորհները դառնում են վերադարձման ենթակա: Շնորհը, որը դառնում է վերադարձման ենթակա, հաշվառման մեջ արտացոլվում է որպես հաշվառման գնահատումների վերանայում:

Եկամուտներին վերաբերվող շնորհների վերադարձումը առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին: Այնքանով, որքանով վերադարձման ենթակա գումարը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը կամ եթե հետաձգված կրեդիտային մնացորդ չկա, ապա վերադարձումը անմիջապես ճանաչվում է որպես ծախս:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է,

երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Խմբի մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Սարքավորումներ	*1-5 տարի*
Արտադրատնտեսական գույք	*5 տարի*
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	*1-5 տարի*
Տրանսպորտային միջոցներ	*7 տարի*

Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումների ամորտիզացիոն ժամկետն է 10 տարի:

Հիմնական միջոցի միավորի վրա նոր բաղկացուցիչի ավելացման կամ հիմնական միջոցի միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ, և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների փոխարինվող բաղկացուցիչները ենթակա են ապաճանաչման:

Բացի վերը նշվածից հիմնական միջոցի վրա կատարվողներից, մյուս ծախսումները (օրինակ՝ սպասարկման պահպանման) չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որը զուրկ է ֆիզիկական սուբստանցիայից:

Ակտիվը ոչ նյութական ակտիվների սահմանման համատեքստում բավարարում է որոշելիության (իդենտիֆիկացման) չափանիշին, երբ այն.

1. կարող է բաժանվել Խմբից՝ հետագա վաճառքի փոխանցման վարձակալության տալու կամ փոխանակելու համար ինչպես անհատական ձևով, այնպես էլ համապատասխան պայմանագրի ակտիվի կամ պարտավորության հետ միասին կամ
2. առաջանում է պայմանագրային կամ այլ իրավական իրավունքներից՝ անկախ այն հանգամանքից հանդիսանում են այդ իրավունքները փոխանցվող կամ առանձնացվելի Խմբի կամ այլ իրավունքներից և պարտավորություններից:

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ՝

1. հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ և
2. ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Խմբի կողմից ձեռք բերված այլ ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները, որոնք կատարվել են ոչ նյութական ակտիվի ֆունկցիաները ընդլայնելու, բաղկացուցիչը փոխարինելու կամ սպասարկելու համար, ավելացվում են ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքին, եթե Խումբը կարող է ցուցադրել, որ այդ ծախսումները բավարարում է ոչ նյութական ակտիվի սահմանմանը և ճանաչման չափանիշներին: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են ծախս, երբ դրանք կատարվում են:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ամորտիզացիան դադարում է հետևյալ երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվին.

1. երբ ոչ նյութական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար նախատեսված, և
2. երբ ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	*1-10 տարի*
Ապրանքանիշեր	*1-10 տարի*
Ֆիրմային անուններ	*1-10 տարի*
Հրապարակումների անուններ	*1-10 տարի*
Լիցենզիաներ և հեղինակագրեր (ֆրանշիզներ)	*1-10 տարի*
Հեղինակային իրավունքներ	*1-10 տարի*
Արտոնագրեր	*1-10 տարի*
Բանաձևեր մոդելներ նախագծեր բաղադրատոմսեր և փորձանմուշներ	*1-10 տարի*

3.4 Վարձակալված ակտիվներ

Պայմանագրի սկզբում Խումբը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Խումբը որպես վարձակալ

Կարճաժամկետ վարձակալությունների և այն վարձակալությունների գծով, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, Խումբը այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:

Այն վարձակալությունը, որի չեղյալ չհամարվող ժամանակաշրջանը գերազանցում է 12 ամիսը և վարձակալության հիմքում ընկած ակտիվը չի համարվում փոքրարժեք, դիտարկվում է որպես երկարաժամկետ վարձակալություն: Երկարաժամկետ վարձակալության գծով ֆինանսական վիճակում վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույթը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Խումբը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որպես վարձատու

Խումբը պետք է իր վարձակալություններից յուրաքանչյուրը դասակարգի կամ որպես գործառնական վարձակալություն կամ որպես ֆինանսական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին, Խումբը ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով:

Խումբը ճանաչում է վարձակալության ժամկետի ընթացքում առաջացած ֆինանսական եկամուտը՝ հիմնվելով մի սխեմայի վրա, որը արտացոլում է վարձակալության շրջանակներում վարձատուի զուտ ներդրումների նկատմամբ հաստատուն պարբերական հատույցադրույք:

Խումբը գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով:

3.5 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.7 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք, առաջին ելք» բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

3.8 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (օրինակ՝ վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Եթե աշխատակիցը ժամանակաշրջանի ընթացքում ծառայություն է մատուցում խմբին, խումբը այդ ծառայության դիմաց սահմանված մասհանումների պլանին վճարվելիք մասհանումը ճանաչում է՝

1. որպես պարտավորություն՝ արդեն վճարված մասհանումները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, խումբը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի օրինակ ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և
2. որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Կազմակերպությունը ստեղծում է պահուստաֆոնդ աշխատակիցների այն ժամանակաշրջանի համար, երբ տասներկու ամսվա ընթացքում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունը:

3.9 Հասույթ

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, խումբը գործարքից հասույթը ճանաչում է հաշվեառու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

1. հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
2. հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն:

3.10 Հարկեր

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվեառու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների չօգտագործած հարկային վնասների և գեղչերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Իրացման հարկեր (ավելացված արժեքի հարկեր)

Հասույթը ծախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ իրացման հարկերից, բացառությամբ՝

1. երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված,
2. դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

3.11 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում, են երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Սկզբնական ճանաչման պահին Խումբը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Խմբի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Խումբը պետք է ճանաչի կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով դեբիտորական պարտքի, պայմանագրի գծով ակտիվի կամ փոխատվության հանձնառության և ֆինանսական երաշխավորության պայմանագրի համար, որոնց նկատմամբ կիրառվում են արժեզրկման պահանջները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մնացել է:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն չի մեծացել, Խումբը պետք է այդ ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

3.12 Պահուստներ պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խումբը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ըստ ակնկալության կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Աճեցման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

3.13 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված, որպեսզի պատրաստ լինեն ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար) ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին, մինչև որ ակտիվներն ըստ էության պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից առացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են տարվա արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

3.14 Կարևոր հաշվապահական գնահատումներ դատողություններ և ենթադրություններ

Ենթադրությունների և դատողությունների գնահատում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Խմբի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ակտիվների պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի համար եկամուտների ու ծախսերի մեծության վրա:

Խումբը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ: Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ ցուցանիշների վրա ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ նման գործոնները, ինչպիսիք են գործառնական կամ տեխնիկական մաշվածությունները հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան:

Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն, ապա Խմբի ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Խումբը գնահատում է Խմբի ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Եթե պայմանները փոփոխվում են և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքը ավելացել է, ապա արժեզրկման պահուստը ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Դեբիտորական պարտքի համար արժեզրկման պահուստը հիմնված է յուրաքանչյուր հաճախորդի հաշվի հավաքագրելիության գնահատականի վրա: Եթե կա հիմնական հաճախորդի վարկունակության նվազում, կամ եթե իրական ժամկետանց գումարները ավելի շատ են, քան կանխատեսումները իրական դեբիտորական պարտքերը կարող են տարբերվել այդ գնահատականներից:

Եթե ղեկավարությունը որոշում է, որ անհատապես գնահատվող դեբիտորական պարտքերի գծով, լինի դա նշանակալի, թե՝ ոչ, ոչ մի օբյեկտիվ հայտանիշ արժեզրկման համար չկա, այն ներառվում է դեբիտորական պարտքերում: Նման վարկային ռիսկի հայտանիշներ ունեցող դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է դրանց արժեզրկման խմբային գնահատում:

Խմբային արժեզրկման գնահատման նպատակով դեբիտորական պարտքերը խմբավորվում են միևնույն ռիսկի հայտանիշների հիման վրա: Այդ հայտանիշները վերաբերվում են խմբերի համար ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատմանը, որը ցույց է տալիս գնահատվող ակտիվի պայմանագրային պայմաններին համապատասխան գումարների վճարումները կատարելու ուղղությամբ դեբիտորի հնարավորությունը:

Արժեզրկման խմբային գնահատման ենթակա դեբիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով ղեկավարության փորձի հիման վրա, որը հետևանք է անցյալ ժամանակաշրջանի վնասի դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման հաջողության:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմաններ ազդեցությունը արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ

տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան գնահատումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Ֆինանսական գործիքի իրական արժեք

Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններում հաշվառվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը դուրս չի բերվում ակտիվ շուկայից, նրանց իրական արժեքը որոշվում է գնահատման մեթոդների օգնությամբ՝ ներառյալ դրամական հոսքերի զեղչման մոդելը: Մուտքային ցուցանիշները այս մոդելներում վերցվում են դիտարկելի շուկաներից, որտեղ դա հնարավոր է, իսկ որտեղ հնարավոր չէ՝ դատողությունների որոշակի աստիճան է անհրաժեշտ իրական արժեքները գնահատելու համար: Դատողությունները վերաբերում են այնպիսի մուտքային տվյալներին, ինչպիսիք են իրացվելիության ռիսկը, վարկային ռիսկը և փոփոխականությունը: Այս գործոնների վերաբերյալ ենթադրությունների փոփոխությունները կարող են ազդել ֆինանսական գործիքների հաշվառվող իրական արժեքի վրա:

3.15 Էական սխալներ

Նախորդ ժամանակաշրջանին վերաբերվող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ճշտելով կուտակված արդյունքի սկզբնական մնացորդը:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական և տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**5 180**	**3 939**	**8 922**	**18 041**
Ավելացումներ		2 861	395	3 256
Օտարումներ և դուրս գրումներ	-			-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5 180**	**6 800**	**9 317**	**21 297**
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**5 180**	**6 800**	**9 317**	**21 297**
Ավելացումներ		3 735	544	4 279
Վերադասակարգում	3 172		(3 172)	-
Օտարումներ և դուրս գրումներ	(302)	-	-	(302)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8 050**	**10 535**	**6 689**	**25 274**
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**2 487**	**1 872**	**5 269**	**9 628**
Տարվա ծախս	944	637	591	2 172
Օտարումներ և դուրս գրումներ	-			-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 431**	**2 509**	**5 860**	**11 800**
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**3 431**	**2 509**	**5 860**	**11 800**
Տարվա ծախս	944	1 390	461	2 795
Վերադասակարգում	184	(15)	(169)	-
Օտարումներ և դուրս գրումներ	(12)	-	(290)	(302)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4 547**	**3 884**	**5 862**	**14 293**
Զուտ հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1 749**	**4 291**	**3 457**	**9 497**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 503**	**6 651**	**827**	**10 981**

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խմբի հիմնական միջոցները գրավադրված չեն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6 572 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5 294 հազար դրամ)սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

5. Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ պահեստում և մանրածախ առևտրում	14 549	21 666
Հումք և նյութեր	7 111	350
	21 660	**22 016**

2023թ. ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը կազմում է 34 921 հազար դրամ, իսկ 2022թ.՝ 26 083 հազար դրամ:

Ակնկալվում է, որ ներկայացված պաշարները ամբողջությամբ կփոխհատուցվեն տասներկու ամսվա ընթացքում: Պաշարները գրավադրված չեն:

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	6 930	3 453
Տրված ընթացիկ կանխավճարներ	314	460
	7 244	**3 913**

Հիմնադրամի դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2023թ. կազմել է 40 օր, իսկ 2022թ՝ 41օր:

Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդ	4 486	1 861
Կանխիկ միջոցներ	1 827	1 490
	6 313	**3 351**

8. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հունվարի 1-ի դրությամբ	**7 088**	**5 446**
Ավելացում	4 104	2 861
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(2 252)	(1 219)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8 940**	**7 088**

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հունվարի 1-ի դրությամբ	**14 374**	**12 115**
Ավելացում	23 184	20 286
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներին	(4 104)	(2 861)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(6 307)	(15 166)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**27 147**	**14 374**

9. Ստացված փոխառություններ
Ոչ ընթացիկ փոխառություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնադիրից ստացված փոխառություններ	113 970	94 428
	113 970	**94 428**

Հիմնադիրից ստացված, գրավով չապահովված փոխառություններն արտահայտված են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և անտոկոս են:

Փոխառությունները ներգրավվել են Հիմնադրամի բնականոն գործունեության ապահովման նպատակով և մասնակի վերադարձվում են առաջին իսկ հնարավորության դեպքում: Փոխառությունների ստացման և վերադարձի հստակ ժամանակացույցի բացակայության պայմաններում անհնար է դառնում դրանց գնահատումը,հետևաբար հիմնադիրից ստացված փոխառությունները հաշվառվում են սկզբնական արժեքով:

Ընթացիկ փոխառություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ փոխառություններ	3 873	-
	3 873	**-**

10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1 456	3 141
Ստացված կանխավճարներ	255	5 203
Կրեդիտորական պարտք բյուջեի գծով	1 117	739
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով	976	293
Այլ կրեդիտորական պարտքեր	-	167
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**3 804**	**9 543**

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

11. Ընթացիկ պահուստներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	3 113	2 614
	3 113	**2 614**

12. Հասույթ, վաճառքի ինքնարժեք
Հասույթ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Արտադրանքի, ապրանքների վաճառքից	46 230	31 578
Ծառայությունների մատուցումից	1 259	2 189
	47 489	**33 767**

Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Վաճառված ապրանքների ինքնարժեք	33 899	23 412
	33 899	**23 412**

13. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Անձնակազմի վարձատրություն	19 850	16 973
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	3 092	2 670
Տարածքի վարձավճար	4 439	2 462
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	976	487
Մաշվածություն և ամորտիզացիա	538	868
Փոստի,հեռահաղորդակցության ծախսեր	90	90
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	335	1 609
Մարկետինգի և գովազդի ծախսեր	69	1 953
Բանկային ծառայությունների ծախսեր	295	291
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	1 352	1 012
Այլ ծախսեր	7 123	7 972
	38 159	**36 387**

14. Իրացման ծախսեր

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Մաշվածություն և ամորտիզացիա	5	85
Մարկետինգի և գովազդի ծախսեր	94	249
Այլ ծախսեր	1 502	3 767
	1 601	**4 101**

15. Գործառնական այլ եկամուտներ և ծախսեր

Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Շնորհներից եկամուտ	8 559	16 385
Այլ եկամուտներ	1 142	19 706
	9 701	**36 091**

Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Վաստակած արձակուրդային գծով պահուստի ծախսեր	1 181	653
Տույժեր և տուգանքներ	25	55
Արտարժույթի փոխարկման ծախսեր	704	405
Այլ ծախսեր	1 359	765
	3 269	**1 878**

16. Ծրագրային այլ ծախսեր

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	(2 760)	(4 711)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտներ	2 543	14 308
Արտարժույթի փոխարժեք. տարբերությունից կորուստներ	(5 424)	(2 853)
Այլ եկամուտներ	-	2 557
	(5 641)	**9 301**

17. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	503	(25)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (փոխհատուցում)	**503**	**(25)**

18. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.11-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6 313	3 351
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	6 930	3 453
	13 243	**6 804**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1 456	3 141
Ստացված փոխառություններ	117 843	94 428
	119 299	**97 569**

19. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա. Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ. Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ խմբի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և բանկային ավանդների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են ԱՄՆ դոլարը և եվրոն:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հազար դրամ	ԱՄՆ դոլար՝ ՀՀ դրամով վերահաշվարկված		Եվրո՝ ՀՀ դրամով վերահաշվարկված	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Ֆինանսական ակտիվներ				
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	803	816	-	-
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	2 055	357		79
Ֆինանսական պարտավորություններ				
Փոխառություններ	42 832	41 644	24 986	6 631
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	8	-	-
Զուտ արդյունք	**(39 974)**	**(40 479)**	**(24 986)**	**(6 552)**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտարժութային հաշիվների մնացորդների վերահաշվարկման համար Խմբի կողմից կիրառվել են հետևյալ փոխարժեքները՝

	2023թ.	2022թ.
1 ԱՄՆ դոլար	404,79	393,57
1 Եվրո	447,90	420,06

Զգայունության վերլուծություն

Հիմնադրամը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է:

Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը հիմնականում ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից ներգրավված փոխառությունները, դեբիտորական պարտքերը: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապատասխան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
2023թ.		
ԱՄՆ դոլար	(3 997)	(3 997)
Եվրո	(2 499)	(2 499)
2022թ.		
ԱՄՆ դոլար	(4 048)	(4 048)
Եվրո	(655)	(655)

գ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Հաշվետու ժամանակաշրջանում Խումբը չունի տոկոսադրույքների փոփոխությունների ռիսկին ենթակա ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Խումբը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ենթարկվածություն պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք 2023թ.	2022թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6 930	3 453
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6 313	3 351
	13 243	**6 804**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը:

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Ոչ ժամկետանց	4 790	1 610
Ժամկետանց, բայց ոչ արժեզրկված՝	2 140	1 843
0-120 օր	-	-
121-365 օր	-	-
365 օրից ավելի	2 140	1 843
	6 930	**3 453**

ա) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը.

2023թ.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-1 տարի	1 տարուց ավել
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1 456	1 456	1 456	-
Փոխառություններ	117 843	117 843	21 766	96 077
	119 299	**119 299**	**23 222**	**96 077**

2022թ.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-1 տարի	1 տարուց ավել
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3 141	3 141	3 141	-
Փոխառություններ	94 428	94 428	-	94 428
	97 569	**97 569**	**3 141**	**94 428**

Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

20. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Հիմնադրամի վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել խմբի իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմանդրամը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությանն պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում:

Հիմնադրամը գտնում է, որ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը պատշաճ կերպով է կատարել համապատասխան օրենքների պահանջները և Հիմնադրամը հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

21. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Խմբի համար կապակցված կողմեր են հանդիսանում նրա հիմնադիր և միաժամանակ գործադիր տնօրեն Թիմոթի Դեյվիդ Սթրայթը և Հիմնադրամի դուստր Ընկերությունը՝ «Էյջ Դի Այ Էֆ Թրեյդինգ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը: Թիմոթի Դեյվիդ Սթրայթից ստացված փոխառությունները բացահայտվել են ծանոթագրություն 9-ում: Դուստր ընկերության հետ ապրանքների իրացման գծով դեբիտորական պարտքը 2023թ. տարեսկզբին կազմել է 15 038 հազար դրամ, տարեվերջին՝ 15 038 հազար դրամ, դուստր ընկերության կողմից Հիմնադրամին տրված կանխավճարը 2023թ. տարեսկզբին կազմել է 7 355 հազար դրամ, տարեվերջին՝ 23 600 հազար դրամ: Դուստր ընկերության կողմից Հիմնադրամին մատուցված ծառայությունների գծով հասույթը 2022թ.-ին կազմել է՝ 2 825 հազար դրամ, իսկ 2023թ. Հիմնադրամին Դուստր ընկերության կողմից ծառայություններ չեն մատուցվել:

Գործադիր տնօրենի աշխատավարձը 2023թ. կազմել է 2 290 հազար դրամ, իսկ 2022թ՝ 2 783 հազար դրամ:

22. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր կամ էական չճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2023թ.) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը տեղի չեն ունեցել:

Տնօրեն՝ Թիմոթի Դեյվիդ Սթրայթ

Հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝ Անետ Գրիգորյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2024 17:10